

ԱԶԱՏ ԲՈՂՈՅԱՆ*

Պալատական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ

bznazt@gmail.com

DOI: 10.54503/1829-4073-2023.1.16-27

ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՑՈՒՄԸ ՍԻՄԵՈՆ ՊՂՆՁԱՀԱՆԵՑՈՒ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԵՋ¹

Բանալի բառեր՝ հայագիտություն, վրացագիտություն, միջնադարագիտություն, թարգմանական մատենագրություն, ձեռագրագիտություն, ազգային ինքնություն, Սիմեոն Պղնձահանեցի:

Ներածություն

Միջնադարագետին Կովկասի մշակութային աշխարհը ներկայանում է որպես ազգային ինքնության խնդիրների տեսանկյունից բազմադեմ և գրեթե չուսումնասիրված մի երևույթ: Վաղուց ի վեր մասնագետների (Ն. Մառ², Լ. Մելիքսեթ-Բեկ³, Կ. Ն. Ակինյան⁴, Պ. Պետերս⁵, Ի. Աբուլաձե⁶, Պ. Մուրադյան⁷, Զ. Ալեքսիձե⁸, Մ. Ռափավա⁹, Ա. Լիդով¹⁰ և ուրիշներ) ուշադրության կենտրոնում է հայ-վրացական փոխհարաբերությունների, ազգային ինքնության խնդիրների լուսաբանումը: Իմ հրապարակման նյութը քաղել եմ թարգմանիչ

* Հոդվածը ներկայացվել է 20.08.22, գրախոսվել է 02.09.22, ընդունվել է տպագրության 28.04.23:

¹ Երջանկահիշատակ Հայրապետ Մարգարյանը մեծ ներդրում ունի Հայաստանում վրացագիտության զարգացման բնագավառում: Նրա վաստակի շրջանակներում արժևորվում է նաև սույն հոդվածը, որ նվիրում եմ նրա հիշատակին:

² Mapp 1906, 31–40 և այլուր:

³ Յեղիշեթ-Զեթ 1928:

⁴ Ակինյան Կ.Ն., 1951:

⁵ Peeters 1950, 160–164.

⁶ Զեթլաձե 1985, 17–28.

⁷ Մուրադյան 2011:

⁸ Զեթլաձե 2016:

⁹ Րաֆա 2009, 615–624:

¹⁰ Lidov 1991, 7–21 և այլուր:

Ազգային ինքնության արտացոլումը Սիմեոն Պղնձահանեցու...

Սիմեոն Պղնձահանեցու մատենագրական ժառանգության հետ կապված հիշատակարաններից, որոնք բացառիկ տեղեկություններ են հաղորդում նրա գործունեության մի քանի դրվագների մասին:

Թարգմանական մատենագրությունը մշակութային գործունեության այն ոլորտն է, որը մեզ թույլ է տալիս գնահատել միջնադարյան վանական դպրոցների խաղացած դերը հայոց մշակույթի զարգացման գործում: Մշակութային փոխառնչությունները Հայաստանին հարևան և քրիստոնյա մյուս ժողովուրդների հետ իրենց արտահայտությունն են գտել թարգմանական մատենագրության մեջ¹¹: XII–XIII դարերում Հայոց մշակույթի ինտեգրումը քրիստոնեական մատենագրությունների հետ արտացոլված է ձեռագրերի հիշատակարաններում և պահպանված թարգմանական երկերում: Խնդրի քննարկման տեսանկյունից կարևոր է ընկալել պատմաաշխարհագրական և քաղաքական միջավայրը, ինչպես նաև այն նպատակները, որոնց շրջանակներում գործել են միջնադարյան հայ թարգմանիչները:

Հիշատակված դարաշրջանը ամբողջովին համընկնում է Կիլիկիայի Հայոց պետության գոյության ժամանակաշրջանի հետ: Հատկապես մշակութային խաչասերումները ամենօրյա էին Կիլիկիայի արևմուտքում գտնվող Ամանոսի կամ Սև լեռներում, ուր հաստատված էին քաղկեդոնական (քյուզանդական, վրացական և կաթոլիկ), հակոբիկ ասորական, նեստորական և հայկական վանական միաբանություններ, որոնցից յուրաքանչյուրն ուներ հարուստ գրադարան¹²:

Այդ գրադարաններում XII դարի երկրորդ կեսին պրպտող հայ մտավորականներից ամենահայտնին Ներսես Լամբրոնացին էր, որի հեղինակած հիշատակարանները թույլ են տալիս մեզ պատկերացում կազմել XII դարի հայոց եկեղեցու ծավալած թարգմանական գործունեության ահռելի չափերի մասին: Կարճ ժամանակում նրա գործակցությամբ մի քանի տասնյակ երկեր են թարգմանվում հունարենից, ասորերենից և լատիներենից: Այդ երկերը վերաբերում են միջնադարյան գիտության գրեթե բոլոր բնագավառներին՝ աստվածաբանություն, մեկնողական գրականություն, վարքագրություն, աշխարհագրություն, իրավաբանություն և այլն: Ընդ որում, Ներսես Լամբրոնացին գործակցում էր հույն-օրթոդոքս, հակոբիկ-ասորի և կաթոլիկ այլազգի հոգևորականների հետ: Կիլիկիայի թագավորության սահմաններում մեծ թափ

¹¹ **Բոզոյան** 2010, 273–281:

¹² Այդ վանական հաստատությունների տեղադրման մասին տե՛ս **Բոզոյան** 2020, 294–303:

ստացած թարգմանական այս շարժումը պետական և եկեղեցական հովանավորության շրջանակներում խոստումնալից պտուղներ տվեց նաև հետագա դարերում:

Թարգմանական շարժումը հայ մատենագրության մեջ ծավալվում էր ոչ միայն Հայոց եկեղեցուն պատկանող վանական միաբանությունների շրջանակներում, այլև դավանաբանորեն հայոց եկեղեցուն հակամետ կառույցներում: Այս տեսանկյունից հատկանշական է XIII դարի վերջում Քոնսյում, Ապարաներում, Նախիջևանում և Մարաղայում կաթոլիկ միսիոներների կողմից խրախուսվող միարարական շարժումը, որի ընթացքում հարյուրավոր երկեր թարգմանվեցին լատիներենից հայերեն: Իհարկե հասկանալի է, որ շարժման բուն նպատակը հայոց եկեղեցու դավանաբանական հիմքերի խաբխուսվումն էր: Թարգմանական գործունեությանը մասնակցում էին եվրոպացի դոմինիկյան կրոնավորներ, որոնց աջակցում էին նաև Հայոց եկեղեցուց բաժանված, Գլաճորի համալսարանի երբեմնի սան եղած հայազգի թարգմանիչներ: Դավանաբանական պայքարը Հայոց եկեղեցու դեմ՝ այս դպրոցի հիմնական ուղղությունն էր, թեպետ թարգմանված երկերի մեջ քիչ չէին նաև ճանաչողական բնույթի գործերը: Հատկանշական է, որ այս թարգմանություններից շատերն ընդօրինակվում էին Հայոց եկեղեցու դավանաբանության պաշտպանների կողմից, հաճախ էլ մեկնաբանվում էին հոգուտ Հայոց եկեղեցու հավատաբանական հիմքերի: Նման աշխատանքները լայնորեն օգտագործվում էին Հովհաննես Որոտնեցու և Գրիգոր Տաթևացու մեկնություններում:

Սիմեոն Պղնձահանեցու մատենագրական վաստակը

Հայոց մատենագրության հարստացման շրջանակներում ուշագրավ երևույթ է նաև Սիմեոն Պղնձահանեցու մատենագրական բազմակողմանի գործունեությունը: Պահպանված հիշատակարանային վկայություններն այնքան սակավ են, որ թվում է, թե նա եզակի գործիչ է եղել իր ժամանակի մատենագրության ասպարեզում: Համենայն դեպս, նույն դարաշրջանի վրացերենից հայերեն թարգմանող այլ գրական գործիչների մասին տեղեկություններ մեզ չեն հասել, թեպետ պահպանվել են վրացերենից թարգմանված երկեր: Ըստ մեզ հասած հիշատակարանների՝ Սիմեոն կրոնավորը աշխատել է Գուգարքի, կամ ինչպես ինքն է ասում Լոռեի (ըստ XIII դ. վրացական սկզբնաղբյուրների՝ Սոմխիթի) Պղնձահանք վանքում, որը XIII դարի սկզբներին Իվանե Զաքարյանի միջամտությամբ անցել էր վրաց եկեղեցու տնօրինությանը (այդ

նույն ճանապարհին է ընտրել նաև Հնեվանքը¹³: Սիմեոնի կենսագրության և մատենագրական գործունեության մի շարք դրվագների վերաբերյալ պահպանվել են սոսկ մի քանի հիշատակարանային վկայություններ:

Հայ մատենագրության մեջ պահպանված թողոնների մեջ կարևոր նշանակություն ունեն Սիմեոն Պղնձահանեցու գրական գործունեության մասին խոսող բազմաբնույթ հիշատակարանները, որոնք հավաքված են Վիեննայի Մխիթարյան միաբան Ներսես Ակինյանի՝ հիշյալ հեղինակի մատենագրական գործունեությանը նվիրված մենագրության մեջ¹⁴: Հիշատակարաններից հնագույնը մեզ է հասել Մաշտոցի անվան Մատենադարանի թ. 1013 ձեռագրում¹⁵: Այստեղ մեզ հետաքրքրող անձնավորությունը հանդես է գալիս ձեռագիրն ընդօրինակող գրչի կարգավիճակով: Նա 1227 թ. ընդօրինակում է Գրիգոր Նյուսացու երկերի ժողովածուն, որի մեջ ընդգրկված են վերջինիս մի շարք աշխատությունները և հայ մատենագրության մեջ հաճախ նույն հեղինակին վերագրվող «Յաղագս բնութեան մարդոյ» (ԽԲ բան) երկը: Հատկանշական է, որ վերջին երկի ընդօրինակման ժամանակ, հետևելով մատենագրական ավանդույթին, ավելի ճիշտ ընդօրինակման հիմք դարձած ձեռագրի վկայությանը, թեպետ աշխատանքը վերնագրված է «Գրիգորի եպիսկոպոսի Նիսացւոյ Յաղագս բնութեան մարդոյ», գրիչ Սիմեոն Պղնձահանեցին արտագրված բնագրի սկզբում կատարել է բանասիրական ճշգրտում. «Նեմեսոյի եպիսկոպոսի Եմեսոյի է գիրքս» (ՄՄ-1013, թղ. 201ա): Հ.Ն. Ակինեանի կռահմամբ, Սիմեոնը 1227 թ. սրբագրումը կատարել է հավանաբար Հովհաննես Պետրիժիոնեցու (ՅԵՃՐՕԲՈ) վրացերեն թարգմանության հաշվառմամբ¹⁶:

Այս հանգամանքն իսկ մեզ թույլ է տալիս ենթադրել, որ գործ ունենք միջնադարյան հայ և վրաց մատենագրությանը հմուտ գրչի և մատենագրի հետ, որը լավ գիտե հայրաբանություն: Ձեռագրի հետագա հնագրական և բնագրագիտական հետազոտությունը, կարծում եմ, ավելի պիտի ամրապնդի մեր այս կարծիքը, քանի որ ձեռագրում ընդօրինակված երկերի լուսանցքներում պահպանվել են բավական թվով սրբագրություններ և լրացումներ, որոնց մանրակրկիտ հետազոտությունը հետագայում թույլ կտա ավելի հստակ ասելու, թե դրանք մեկ այլ օրինակի համեմատության, կամ թե այլալեզու (ենթադրելի է վրացերեն) բնագրի հետ համեմատության արդյունք են: Սիմեոն Պղն-

¹³ Տե՛ս **Մուրադյան** 1977, 143, 203:

¹⁴ **Ակինեան** հ. Ն., 1951, 5–9:

¹⁵ **ՄՅՀԱՄՄ**, հտ. Դ, 2008, 53–58:

¹⁶ Տե՛ս **Տաշեան** 1895, 1–22, հմմտ. **Ակինեան** հ. Ն., 1951, 6:

ձահանեցի գրիչը ձեռագրի վերջում, սեփական հիշատակարանից առաջ, հարկ է համարել բերել հիշատակված երկերի թարգմանական հիշատակարանը (ՄՄ-1013, թղ. 241), որում ընթերցողին տեղեկացնում էր, որ, դեռևս հինգ դար առաջ, ընդօրինակված երկերը համատեղ ջանքերով թարգմանել են Դավիթ Հյուպատոսը (Կենա¹⁷) և Ստեփաննոս Սյունեցին 719 թ. Կոստանդնուպոլսում, Լևոն Գ Իսապղացի կայսեր իշխանության առաջին տարում¹⁸: Խոսքն իհարկե վերաբերում է VIII դարի առաջին կեսի թարգմանիչներին, որոնց թարգմանած երկերի հիշատակարաններից մի քանիսը մեզ են հասել ավելի ուշ գրված տարբեր ընդօրինակություններում¹⁹: Ինչպես այս, այնպես էլ սրանից անմիջապես հետո գրված հիշատակարանները թվագրված են բյուզանդական արարչական թվականով, որը, ըստ Կ. Կեկելիձեի, մեծ տարածում է ունեցել նաև վրաց մատենագրության մեջ²⁰: Նույն երևույթը հայ մատենագրության մեջ դիտել է Պ. Մուրադյանը²¹: Այս նույն թվագրման համակարգն օգտագործված է նաև Սիմեոնի մեկ այլ հիշատակարանում, որը վերաբերում է Պրոկոլ Դիադոխոսի Աստվածաբանական Շաղկապների թարգմանությանը²²:

Եմեսիացու երկի հիշատակարանում Սիմեոնը հավաստում է, որ Գրիգոր Նյուսացու երկերը ընդօրինակել է ընտիր և լավ հին օրինակներից («լաւ արինակաց հնոց, որ թարգմանչացն գրած էր»)²³, որից էլ կարելի է ենթադրել, որ ձեռագրի լուսանցքների սրբագրումներն ու հավելումները երկու կամ ավելի հին ձեռագրերի համեմատության արդյունք են: Սա նշանակում է նաև, որ գրիչն իր ձեռքի տակ ունեցել է հայերեն ձեռագրերի նշանակալի հավաքածու: Համադրելով բերված փաստերը Պ. Մուրադյանը ենթադրում է. «Հայկական և վրացական մատենագրության հանդեպ ցուցաբերած այսպիսի ծանոթությունը, հավանաբար, և՛ հարուստ գրադարանի առկայություն է ապացուցում

¹⁷ Այս եզրույթի մասին տե՛ս Zeibt 1974, 369–380:

¹⁸ Ցավոք, այս հիշատակարանի մասին խոսք անգամ չկա հղված ձեռագրացուցակում: Պետք է հիշել նաև, որ Գրիգոր Նյուսացու երկերի հայերեն թարգմանությունների շուրջ ընդարձակ հոդված է տպագրել Կ. Մուրադյանը (տե՛ս Մուրադյան 1991, 101–110), ուր բնագրագիտական քննության է ենթարկել հիշյալ հիշատակարանը: Այս մատյանից է հիշատակարանն ընդօրինակել նաև Ա. Մաթևոսյանը (տե՛ս հաջորդ ծանոթագրությունը):

¹⁹ Այդ մասին տե՛ս Տաշեան 1895, 7–12, հմմտ. Հիշատակարաններ Ե–ԺԲ 1988, 24–26:

²⁰ Տե՛ս Յեզեկով 1945, 325–341:

²¹ Мурадян 2012, 120–132:

²² Տե՛ս Ակինեան 1951, 23–25:

²³ ՄՅՀԱՄՄ, հտ. Դ, 2008, 56:

Պղնձահանքում, և՛ արժանավոր կրթօջախի գոյությունը»²⁴: Իր ձեռքի տակ լավ գրադարան ունենալու փաստի մասին է վկայում նաև ձեռագրի պահպանակը, որը ներկայացնում է մինչև X դարը գրված երկաթագիր Ավետարանի երկու թերթ Ղուկասի ԺԵ, ԻԲ գլուխների ընդօրինակությամբ²⁵: Դավանաբան հետազոտողների համար կարևոր է այն փաստը, որ պատահիկում ԻԲ գլխից բացակայում են Քրիստոսի քրտինքին վերաբերող՝ 44–46 տները, որը չեն նկատել նկարագրողները: Սիմեոն կրոնավորի եզակի ինքնագիր հիշատակարանից տեղեկանում ենք, որ ձեռագիրը գրվել է «...յերկիրս Հայոց, մերձ ի Լաւոէ, ի վանքն որ կոչի Սալենձահան, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին, յիշխանութին Իվանէ Աթապակին՝ շինողի վանիցս...» (ՄՄ-1013, թղ. 241): Այլ մանրամասների մասին տեղեկություններ չեն հաղորդվում:

Թարգմանիչ Սիմեոն Պղնձահանեցին և նրա ազգային ինքնությունը ըստ հիշատակարանների

Սիմեոն Պղնձահանեցու մատենագրական վաստակի մասին պատմող մյուս հիշատակարանները վերաբերում են նրա ձեռնարկած թարգմանական գործունեությանը: Այդ ձեռագրերի մեջ հնագույնը Մխիթար Այրիվանեցու կողմից 1283 թ. ընդօրինակած «Ճառընտիրն» է, ուր «[Ա]մելախաւսի իմաստասիրի եւ հռետորի Աթենացո եպիսկոպոսի Լուծմունք Պրոկղի Դիադոխոսի անուանեցելոյ] Աստուածաբանութեանց»²⁶ երկից անմիջապես հետո, Գեղարդավանքի կրոնավորը ընդօրինակում է երկի թարգմանիչ Սիմեոն Պղնձահանեցու հիշատակարանը (ՄՄ-1500, թղ. 1121բ), որն ըստ հեղինակի, գրված է «...**զերկիրս Հայոց** ի վանս վրաց, որ կոչի Պղնձահանք յաւիտենից թուականին ԶԶԾԶ (= 6756-5508 = 1248)»²⁷: Նախորդ հիշատակարանից տարբերվող «ի վանս վրաց» արտահայտությունը թույլ է տվել մասնագետներին ենթադրել, որ Պղնձահանքը թեպետ գտնվում է Հայոց երկրում (**զերկիրս Հայոց**)²⁸,

²⁴ Մուրադյան 1977, 209–210:

²⁵ Հմմտ. ՄՅՀԶՄՄ, հտ. Դ, 2008, 54–55:

²⁶ Հմմտ. ՄՅՀԶՄՄ, հտ. Դ, 2008, 1459, այս ձեռագիր ժողովածուի գրության հանգամանքների և բովանդակության մասին մանրամասն տե՛ս **Հարությունյան** 1985, 100–145:

²⁷ Հմմտ. նույն տեղում:

²⁸ Այս երկի ու հիշատակարանի մերօրյա վրաց թարգմանիչները և հետազոտողները պնդում են, որ երկը թարգմանվել է Հարավային Վրաստանում, տե՛ս **Քրոջլե Ծոփոբոն** 2009, 24 (հայերեն բնագիր), 25 (վրացերեն թարգմանություն), էջ 90 (Ամփոփում), 102 (Summary): Ցավոք, վրաց հայագետների հրապարակած երկի բնագրագիտական ծիրից դուրս են մնացել Հ. Տաշյանի պատմաբանասիրական հետազո-

իր պատկանելությամբ վրաց վանք է: Հատկանշական է, որ Պրոկոլ Դիադոխոսի երկի լուծմունքը Սիմեոն Պղնձահանեցին թարգմանել է վրացերենից («ի վրաց լեզուէ ի հայ լեզու»): Այս հիշատակարանից տեղեկանում ենք նաև, որ երկի թարգմանության տարում՝ 1248 թ., Սիմեոնն արդեն 60 տարեկան էր և իրեն համարում էր «յոյժ ծերացեալ» և «տկարացեալ յաչաց»: Այս հիշատակարանը թույլ է տալիս Սիմեոնին ճանաչել ոչ միայն որպես ազգությամբ հայ, այլ նաև հայ և վրաց քրիստոնյա մատենագրության հմուտ գիտակ, որը հետամտում է հարստացնելու սեփական, այսինքն՝ հայ ազգային մատենագրությունը («յայն սակս թարքմանեցի, զի մի պակաս եղիցի սա յազգէս մերմէ»): Վերջին խոսքերը փաստում են, որ անկարելի է չինական պարիսպ կանգնեցնել հայերենով պահպանված քաղկեդոնական և ոչ քաղկեդոնական մշակույթների միջև (ինչպես դա կատարվում է մերօրյա որոշ «գիտական» հետազոտություններում). թարգմանչի նպատակն է ծառայեցնել իր կողմից թարգմանված երկերը ընդհանուր ազգային նպատակին՝ հայ մատենագրության հարստացմանը:

Ի դեպ, Պրոկոլի այս Լուծմունքը ընդօրինակված է նաև Չմշկածագի հայ-քաղկեդոնական միջավայրում, 1298 թ. (տե՛ս Երուս., թ. 336, գրիչ՝ Սերգիս), որը վկայում է, որ ինչպես հայոց եկեղեցու դավանաբանության ջահակիր Մխիթար Այրիվանեցու, այնպես էլ Չմշկածագի հայ քաղկեդոնականների միջավայրում եղել են հիշատակված երկերի ընթերցողներ:

Հովհան Սինայեցու «Սանդուխք աստուածային ելից» հայերեն թարգմանության՝ 1361 թ. ընդօրինակված հնագույն ձեռագրերից մեկը²⁹ (Բեռլին, թ. 25), Ի (XX) գլխի վերջում տեղեկացնում է, որ մինչ այստեղ թարգմանել է Մինաս Սյունակեացը Տրապիզոն քաղաքից, իսկ դրանից հետո՝ մյուս գլուխները շարունակել է թարգմանել Սիմեոն քահանան՝ վրացերեն լեզվից³⁰: ՄՄ-1925 ձեռագիրը (1401 թ.) վերստին հավաստում է, որ Հովհաննես Սինայեցու հիշատակված երկը «Ի ճառէն ի վեր» վրաց լեզվից թարգմանել է Սիմեոնը (թղ. 89բ)³¹: Ենթադրվում է, որ հիշատակված Տրապիզոնցի Մինաս թարգմանիչը

տույթուններում առկա բազմաթիվ նկատառումներ (տե՛ս **Տաշեան** 1895, 23–48, 147–161): Հեղինակները շրջանցել են նաև իմ՝ Թբիլիսիում ընթերցված և հրապարակված հոդվածը. տե՛ս **Bozoyan** 2012, 164–172:

²⁹ Այս երկի հնագույն, 1329 թ. ընդօրինակությունը նկարագրված է Խաչիկ Դադյան վարդապետի ձեռագրերի մեջ տե՛ս **Թովմեան** 1898, 83–86: Հմմտ. **Ակինեան** 1951, 108:

³⁰ Այս մասին տե՛ս **Ակինեան** 1951, 106–107, 110–111, 119–125:

³¹ Տե՛ս **ՄՅՀԱՄՄ**, հտ. 2 2012, սյուն 588:

Ազգային ինքնության արտացոլումը Սիմեոն Պղնձահանեցու...

Հովհաննես Սինայեցու երկի Ա-Ի գլուխները թարգմանել է հունարենից: Այս փաստը շրջանցվում է Սիմեոն Պղնձահանեցու թարգմանական երկերին անդրադարձած ժամանակակից որոշ հետազոտողների կողմից:

Նույն թարգմանչի հետ գործակցության վկայության ենք հանդիպում նաև մեկ այլ ձեռագրում: 1582 թ. Իոան գրչի կողմից Ակն գավառի Նորվան /կամ Աթմա/ վանքում ընդօրինակված «Յունական Շարակնոց»-ում ևս հավաստվում է, որ այդ ժողովածուն թարգմանել են պապա Մինասը և պապա Սիմեոնը (Բազմավէպ, 1894, էջ 328, ծան.)³²:

Ինչպես տեսանք, Սիմեոն Պղնձահանեցու անմիջական ընդօրինակությամբ մեզ է հասել Գրիգոր Նյուսացու հունարենից հայերեն թարգմանված երկերի ժողովածուն (1227 թ.): Հետագա ընդօրինակություններով պահպանվել են նաև Սիմեոն Պղնձահանեցու կողմից վրացերենից հայերեն թարգմանված Պրոկղ Դիադոխոսի, Հովհաննես Դամասկացու և Հովհաննես Սինայեցու աստվածաբանական-փիլիսոփայական երկերը: Պահպանված հիշատակարանները ցույց են տալիս, որ Սիմեոն կրոնավորը գործակցել է Չմշկաձագի, հնարավոր է նաև այլ վայրերի հայ-քաղկեդոնական մշակութային գործիչների հետ: Ակնհայտ է, որ Սիմեոն Պղնձահանեցին տիրապետել է վրացերենին, անթերի՝ դասական հայերենին: Նա անկասկած հայ մատենագրության մեծ գիտակ է եղել: Հիշատակված երկերի թարգմանությունը Սիմեոնը պայմանավորում է հայ մատենագրության մեջ հիշատակված հեղինակների երկերի բացակայությամբ («այլ զի ոչ էր սա թարգմանեալ ի մերս լեզու»): Մերս լեզու ասելով, հեղինակը նկատի ունի հայերենը:

Եզրակացություն

Հայ-քաղկեդոնականների (օրթոդոքս և կաթոլիկ) միջավայրի համար հավանաբար հատուկ էր երկակի, կարելի է ասել մասնատված աշխարհընկալումը: XIII դարում, հավանաբար դրանից հետո էլ, նրանցից շատերը իրենց դեռևս հայ էին համարում: Այդ են վկայում քաղկեդոնական միջավայրից վկայված սակավաթիվ հիշատակարանները: Դրա ապացույցներից է 1035 թ. Աթոնի մեծ Լավրայում գրված վավերագրի վերջում Թեոկտեստոս վանահոր հայերեն ստորագրությունը³³: Կամ թե Անտիոքի շրջակայքում հայտնաբեր-

³² Հմմտ. Ակինեան հ. Ն. 1951, 193:

³³ Տե՛ս Բարթիկյան 1973, 68–72: Նմանատիպ մի շարք վկայություններ Հր. Բարթիկյանը հավաքել է Հովհաննես Սկիլիցեսի երկի հայերեն թարգմանության ծանոթագրություններից մեկում (տե՛ս Բյուզանդական աղբյուրներ, Գ, 334–336, ծան. 394):

ված վրացերեն արձանագրությունը. “ევლესიად არს სომეხთაჲ” մակագրությամբ³⁴: Բերված փաստերն իհարկե պահանջում են նոր հաստատումներ և փաստարկումներ, այնուամենայնիվ հիշատակված վկայությունները խոսում են հայ քաղկեդոնականների էթնիկ գիտակցության մասին, որին իրենց աշխատանքներում անդրադարձել են նաև ֆրանսիացի արևելագետ Ժոզեֆ Լորանը և բելգիացի գիտնական, արևելագետ Պոլ Պետերսը³⁵:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ակինեան հ. Ն. 1951, Սիմէոն Պղնձահանեցի եւ իր թարգմանությունները վրացերէնէ, Վիեննա, 276 էջ [Ազգային Մատենադարան, ՃԿԴ]:

Բարթիկյան Հր. 1973, Մեծ Լավրայի առաջնորդ (պոռտոս) Թեոկտիստոսի հայերեն ստորագրությունը (Աթոնում հայ քաղկեդոնականների գործունեության հարցի շուրջ). Բանբեր Մատենադարանի, 11 (1973), Երևան, Հայկ ՍՍՀ ԳԱ հրատ., էջ 68–72:

Բոգոյան Ա. 2010, Օտար թարգմանիչները հայ մատենագրության մեջ. - Լևոն Խաչիկյան-90, Նյուֆեր Մատենադարանի հիմնադիր տնօրենի ծննդյան իննսունամյակին նվիրված միջազգային գիտաժողովի (9–11 հոկտեմբերի 2008), Երևան, «Նաիրի», էջ 273–281:

Բոգոյան Ա. 2020, Սեւ լեռների վանական համալիրներն ըստ Ղ. Ալիշանի տեղադրության. - Բազմավեպ 178, p. 294–303:

Բյուզանդական Աղբյուրներ 1979, Գ, Հովհաննես Սկիլիցես / թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հր. Բարթիկյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 439 էջ [Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 10]:

Թովմեան Յ. 1898, Յուցակ ձեռագրաց Խաչիկ վարդապետի Դադեան, Ժողոված 1878–1898, Մասն Ա, Վաղարշապատ, տպ. Մայր Աթոռ ս. Էջմիածնի, 112 էջ:

Հարությունյան Է. 1985, Մխիթար Այրիվանեցի (կյանքն ու ստեղծագործությունը), Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 240 էջ:

Հիշատակարաններ Ե-ԺԲ 1988, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ Ե–ԺԲ դդ. / Աշխատասիրությամբ Ա.Ս. Մաթևոսյանի, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 368 էջ:

Մուրադյան Կ. 1991, Գրիգոր Նյուսացու հայերեն թարգմանությունների հարցի շուրջ. – առանձնատիպ ՀՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 3, էջ 101–110:

Մուրադյան Պ. 1977, Հայաստանի վրացերեն արձանագրությունները. աղբյուրագիտական քննություն, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն (Armeno-Georgica 1), 364 էջ:

Մուրադյան Պ. 2011, ԺԱ-ԺԳ դարերի հայ-վրացական դավանական խնդիրները և Մխիթար Գոշի «Առ վրացիսն» թուղթը. Աղբյուրագիտական քննություն և բնագրեր, Ս. Էջմիածին, Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչություն, էջ 288:

³⁴ Տե՛ս **Mécérian** 1964, 111–112:

³⁵ Տե՛ս **Laurent** 1920, 35–55 և **Peeters** 1950, 160–164.

Ազգային ինքնության արտացոլումը Սիմեոն Պղնձահանեցու...

ՄՅՀԱՄ, հտ. Դ 2008, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Դ / Կազմեցին Ա. Քեօշկերեան, Կ. Սուքիասեան, Յ. Քեօսեան, խմբագրութեամբ՝ Փ.Անթաբեանի, Յ.Քեօսեանի, Ա.Ղազարոսեանի, Տ. Շահէ քիյ. Հայրապետեանի, ցանկերը կազմեց՝ Վ. Դարիկեանը, Երևան, «Նաիրի» և ԵՊՀ հրատարակչութիւններ, 1694 պոլս:

ՄՅՀԱՄ, հտ. Զ 2012, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Զ: Ձեռագիրք 1801–2100 / Խմբ.՝ Գ. Տէր-Վարդանեանի, Երեւան, «Նաիրի» հրատարակչութիւն, 1888 պոլս:

Տաշեան Յ. 1895, Մատենագրական մանր ուսումնասիրութիւններ, Ա, Վիեննա, Մխիթարեան տպարան [Ազգային Մատենադարան, ԺԶ], էջ 296:

Bozoyan A. 2012, Le traducteur Siméon Plandzahank et la question de l'identité nationale. – Actes du colloque: L'Europe et le Caucase. Les relations interrégionales et la question de l'identité / Sous la direction de M. Dokhtourichvili, G. Dédéyan, I. Augé, Tbilissi, Edition Université d'Etat Ilia, 2012, p. 164–172:

Laurent J. 1920, Les Origines médiévales de la question arménienne. – Revue des Études arméniennes, I, p. 35–55 [վերահրատ. տն՝ J. Laurent, Études d'histoire Arménienne, Louvain, éd. Peeters, 1971].

Lidov A. 1991, The Mural Paintings of Akhtala, Moscow, Nauka Publishers, 1991, p. VIII+129:

Mécérian J. 1964, Expédition archéologique dans l'Antiochène occidentale, Beyrouth 1964, p. 144, 84 planches, 4 cartes (Mélanges de l'université Saint Joseph, t. XL, fasc. I):

Peeters P. 1950, Le tréfonds oriental; de l'Hagiographie byzantine, Bruxelles, p. 160–164.

Zeibt W. 1974, Kynarios – Ein “Neuer” Wurdenträger am Hof des Byzantischen Kaisers. Die Lösung der Probleme um das Armenische Կենսաւն mit Hilfe Byzantinischer Bleisiegel. – Հանդէս Ամսօրեայ, ԶԸ տարի, էջ 369–380:

Март Н. 1906, Аркаун, монгольское название христиан в связи с вопросом об армянах-халкедонитах, in: Византийский временник, XII, N 1–2, Приложение, с. 68.

Մուրադյան Ս. 2012, Хронология систем летоисчисления по армянским источникам (Երաբո Ք.Մ.). – Պ. Մուրադեան, Կովկասեան մշակութային աշխարհը եւ Հայաստանը, պրակ Բ, Երևան, ՀՀ ԳԱ «Գիտութիւն» հրատարակչութիւն, էջ 120–132:

Աբլաթեան Ի. 1985, ռուստաւոյ խնոյս յարտաւոյնն ընտրաւն ընտրաւն ընտրաւն. - Ի. Աբլաթեան, Մրոմեթի, Ե. IV, տ. Ի, գ. 17–28:

Աղաթեան Զ. 2016, յրոտիտնաւոյ կազկասիա. իտորոյլ-փոլոյլորի ընտրաւն, 3, տ. Ի: :

Կեղեկեան Կ. 1945, լոլաւորիտնաւոյ ընտրաւն. - Կ. Կեղեկեան. Երոտն, Ե. II, տ. 1945, գ. 325–341:

Մելոյսեան-Յեզի Լ. 1928, „Որոտնաւոյ իտորաւն ընտրաւն“ ընտրաւն, իտորաւն ընտրաւն ընտրաւն ընտրաւն, ընտրաւն, XII+261 գ. [հայերէն յարգմ. տն՝ Մելոյսեան-Յեզի Լ., «Վարդապետը Հայոց Հիստորիային կոտման» և իտորաւն իտորաւն. հայ-կոտման հարաբերութիւններ (պատմական հետազոտութիւններ

ქორბ]], ქრისტიანული ჯარდმანსე ჯრ. ჲარქანქანს, ს. ღმქანბქს, სქარ აქოი სოქრ ღმქანბქს ჰრასარასქოქონ, 2016, 288 ღქ]

პროკლე დიადოქოსი 2009, პროკლე დიადოქოსი, კავშირნი ღმრთისმეტყუელეზონი და იონე პეტრიქის განმარტებეზი. სომხური ვერსია, III / ტექსტი გამოსაცემად მოამზადა, გამოკვლევა დაურთო მია რაფავამ კრიტიკული აპარატი და ლექსიკონი მოამზადეს მია რაფავამ, ხათუნა გაფრინდაშვილმა და ირმა ხოსიტაშვილმა, თბილისი 2016, 474 გვ. [ოქიკი Რქარქიქოქი ჯარქსაქე ასთოიადქანსასქანსე ს Რიანსე Რსთიქბქი ლიბნიქე. Რაქსენს ჯარდმანსოქონ, III / ღსთადიოქონსე Რაქსელ ს თსქსთე თაქაქოქასნ ღ აქათრასთელ სქარ Რაქასქან, ქსნასქან ააქარასთე ს ქარქარსე აქათრასთელ სს სქარ Რაქასქან, Რაქონსა Რაქიქსეაქქიქს ს Რრმა Რიქსთაქქიქს, Რქიქიქი 2016, 474 ღქ]:

რაფავა მ. 2009, სომხური მონოგრაფიებეზი წინაღმდეგ ქართულ მწერლობაში არსებული ნაწარმოებეზი სტილისტიკა. – „ბიზანტინილწგია საქართველოში“, თბ., გვ. 615–624:

ОТРАЖЕНИЕ НАЦИОНАЛЬНОЙ ИДЕНТИЧНОСТИ В ЛИТЕРАТУРНОМ НАСЛЕДИИ СИМЕОНА ИЗ ПЛНДЗАХАНКА

Б030ЯН А.

Резюме

Ключевые слова: арменоведение, грузиноведение, медиевистика, переводная литература, кодикология, национальная идентичность, Симеон из Плндзаханка.

Материалом для данной публикации послужили памятные записи (колофоны), связанные с литературной деятельностью переводчика Симеона из Плндзаханка. В XIII в. им были переведены с грузинского языка на армянский труды Прокла Диадоха, Иоанна Синаита и др. Памятные записи этих переводов содержат эксклюзивные сведения о некоторых эпизодах деятельности известного переводчика. По сохранившимся записям, монах Симеон работал в монастыре области Гугарк или, как он отмечает, в районе Лоре (по грузинским средневековым источникам – в области Сомхити). При посредничестве Иванэ Закарида этот монастырь в XIII в. перешел под контроль грузинской церкви. Симеон по вероисповеданию был халкедонитом, поэтому служил в грузинской церкви. Однако в своих колофонах он подчеркивал: «для того я

перевел этот труд, чтобы [в литературе] моего народа не было пробелов» («յայն սակս թարքմանեցի, զի մի պակաս եղիցի սա յազգէս մերմէ»):

REFLECTION OF NATIONAL IDENTITY IN THE LITERARY LEGACY OF SIMEON OF PLNDZAHANK'

BOZOYAN A.

Summary

Key words: Armenology, Georgian studies, medieval studies, translated literature, codicology, national identity, Simeon of Plndzakhank.

The material for the present publication is the colophon records on the literary activity of the translator Simeon of Plndzahank'. In the XIII century, he translated the works of Proclus Diadochus, John Sinaiticus, etc. from Georgian into Armenian. The memorable records of these translations contain exclusive information about several episodes of the famous translator's activities. According to surviving records, monk Simeon worked in the monastery of Gugark province or, as he notes, in the region of Lore (according to Georgian medieval sources – in the region of Somkhiti). In the XIII century, this monastery came under the control of the Georgian Church due to Ivane Zakarid's mediation. Simeon was a Chalcedonian by confession, so he worked in the Georgian church. However, in his colophons he underscored: «I translated this [work], so that [the literature of] my people may have no gaps» («յայն սակս թարքմանեցի, զի մի պակաս եղիցի սա յազգէս մերմէ»):